ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

7 փետրվարի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

17
(2683)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔՊ–Ն ԿԱՍԻ, ԿԽՈՍԻ

Խորհրդարանում այսօր թեժ է լինելու: ԱԺ-ն հենց այսօր քննարկելու է «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի եւ նույն խմբակցության պատգամավոր Արմեն Չարչյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին դատախազության միջնորդությունները:

«Ժողովուրդ» օրաթերթն արդեն հայտնել է, որ ընդդիմությունը երկար մտորումներից հետո որոշել է բոյկոտել նիստը. ինչպես Սեյրան Օհանյանն է բնորոշել, «դա կլինի մեկ գավառական դերասանի՝ ՔՊ-ի թատրոն», ուստի իրենք չեն մասնակցելու նիստին, թեեւ օրեր շարունակ պատրաստվել էին իշխանականների հետ «կռիվ տալուն»:

Ստացվում է՝ այսօր ԱԺ-ում ՔՊ-ականների եւ Նիկոլ Փաշինյանի օգնական աշխատած գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի «բենեֆիսն» է լինելու:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ երեկ ՔՊ-ականները հատուկ հավաքվել են ընդդիմադիրների հարցը քննարկելու եւ նոր ցուցումներ ստանալու:

Տեղեկացանք, որ ՔՊ-ականներին շատ է ուրախացրել հատկապես այն փաստը, որ ընդդիմությունը չի մասնակցելու նիստերին. ստացվում է՝ իրենց հակադարձող չի լինի, իրենք իրենցով կասեն-կխոսեն, հանրությանն էլ կներկայացնեն, որ ընդդիմադիրները վախեցել են, հակադարձելու ոչինչ չեն ունեցել, դրա համար էլ չեն եկել նիստին:

Խմբակցության երեկվա նիստին էլ ՔՊ-ականներից ոմանք փորձել են իրենց դժգոհությունը հայտնել, որ անվտանգային նման լուրջ մարտահրավերների պայմաններում պետք չեն ավելորդ քաղաքական ինտրիգներ, բայց ՔՊ մեծամասնությունը իր գոհունակությունն է հայտնել այս առիթով եւ նշել, որ, ընդհակառակը, պետք է ավելի «խիստ» լինեն ընդդիմադիրների նկատմամբ:

ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալի պաշտոնում Վահան Կոստանյանի նշանակումը շատ քննարկվեց եւ քննադատվեց: Այդպիսի նշանակման պատճառներից մեկը նաեւ կադրային սովն է, որ ունեն իշխանությունները, եւ դրա վառ ապացույցը նաեւ այն թափուր հաստիքներն են, որ առկա են նախարարություններում: Այս անգամ «Ժողովուրդ» օրաթերթը կտեղեկացնի ՀՀ-ում առկա 13 նախարարություններից փոխնախարարների թափուր հաստիքների մասին: Օրինակ՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարության հաստիքացուցակի՝ նախարարը պետք է ունենա նախարարի մեկ առաջին տեղակալ եւ երեք տեղակալ, սակայն ՀՀ առողջապահության նախարարության կայքի պաշտոնական տվյալների համաձայն՝ Անահիտ Ավանեսյանն ունի միայն երկու տեղակալ: Արդարադատության նախարարության պաշտոնական կայքի տվյալների համաձայն՝ նախարար Գրիգորի Մարտիրոսյանը պետք է ունենա չորս տեղակալ, սակայն ունի միայն երեքը. համենայնդեպս, մյուս փոխնախարարի տվյալները բացակայում են: Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Ռոբերտ Խաչատրյանն ունի մեկ առաջին տեղակալ եւ երկու տեղակալ, այնինչ պետք է ունենա երեք տեղակալ: Այսինքն՝ Հայաստանում փոխնախարարների համար հարմար թեկնածուներ չկան:

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանի շուրջ Սահմանադրական դատարանում տիրող իրավիճակի վերաբերյալ: Մասնավորապես, Սահմանադրական դատարանում կա կոնկրետ փաստաթուղթ, որտեղ արձանագրված է, որ հունվարի 10-ի ՍԴ աշխատակարգային նիստի ժամանակ Սեդա Սաֆարյանը ՍԴ դատավորներին խոստովանել է, թե ինչ քայլ է արել: Արձանագրվել է, թե ՍԴ դատավորները ինչ հարցեր են տվել իրեն: «Ժողովուրդ» օրաթերթին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ ՍԴ դատավորները հունվարի 10-ից համարել են, որ սկսվել է հաշվարկը, ու հենց այդ օրվանից իրենք ունեն երեք ամիս ժամանակ դիմում ներկայացնելու Սեդա Սաֆարյանի գործողության մասով: Եվ, ահա, 3 օրից կլրանա մեկ ամիսը, սակայն մինչ օրս որեւէ ՍԴ դատավոր Սեդա Սաֆարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասով դիմում չի ներկայացրել: Դեռեւս կա երկու ամիս, ու ոչինչ բացառել հնարավոր չէ: Հիշեցնենք, որ հունվարի 19-ին 168.am -ը եւ փաստաբան Արսեն Բաբայանը տեղեկություն հրապարակեցին այն մասին, որ 2022թ. դեկտեմբերի 28-ին Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանը՝ որպես դիմողների ներկայացուցիչ, այսինքն՝ որպես փաստաբան, հատուկ վերանայման վերաքննիչ բողոք է մուտք արել Վերաքննիչ քրեական դատարան, այսինքն՝ զբաղվել է փաստաբանությամբ: Սեդա Սաֆարյանը, սակայն, չէր կարող հանդես գալ որպես փաստաբան, քանի որ նա դատավոր է. դա արգելված է օրենքով:

Հայաստանում սպառողական զամբյուղը, ամսական կտրվածքով, բավականին թանկացել է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը, նախորդ տարվա չորրորդ եռամսյակի միջին ընթացիկ գներով, կազմել է 77 հազար 740 դրամ՝ ամսական կտրվածքով, մինչդեռ 2021 թվականի չորրորդ եռամսյակի միջին ընթացիկ գներով՝ սպառողական զամբյուղը կազմել էր 71 հազար 570 դրամ՝ ամսական կտրվածքով: Պարենային զամբյուղի արժեքը կազմել է 42 հազար 21 դրամ՝ ամսական կտրվածքով, որը 2021 թվականի նույն ժամանակահատվածում կազմել էր 38 հազար 687 դրամ: «Ժողովուրդ» օրաթերթը հաշվարկեց, թե որքան են կազմում առաջին անհրաժեշտության սննդամթերքի գները: Ըստ Վիճակագրական կոմիտեի՝ մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը, 1 մեծահասակի հաշվով, կազմել է ընդամենը 42 հազար 21 դրամ: Այս գումարին համարժեք ցանկում ներառված են հացամթերքը, մսամթերքը, ձկնամթերքը, կաթնամթերքը, ձուն, յուղն ու ճարպը, միրգը, բանջարեղենը, կարտոֆիլը, շաքարը, ոչ ալկոհոլային խմիչքը եւ այլ սննդամթերք: Օրական փաստացի սպառումը, 1 շնչի հաշվով, 461 գրամ կազմել է հացամթերքը, 48.3 գրամ՝ մսամթերքը, 18.6 գրամ՝ ձուն, 203.7 գրամ՝ բանջարեղենը, եւ այլն: Տավարի մսի 100 գրամը երեւանյան սուպերմարկետներում, խանութներում գերազանցում է 350-450 դրամը, ձկնամթերքից «Իշխան» ձկնատեսակի 100 գրամը մոտ 300 դրամ է կազմում, երկու հատ ձուն ընդհանուր մինչեւ 160 դրամ է, իսկ, ահա, 90-100 գրամ հացը սկսում է 150-170 դրամից: Սրան զուգահեռ՝ նկատենք, որ մեր հանրապետությունում կենսաթոշակի նվազագույն չափը կազմում է ավելի քան 31 հազար դրամ, նվազագույն աշխատավարձը՝ 75 հազար դրամ է. այս դեպքում մարդիկ անգամ սննդի այդ նվազագույնն էլ չեն կարող ձեռք բերել: Ստացվում է, որ սպառողական զամբյուղի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի չափը, իսկ կոմունալ վարձերի, անհրաժեշտ դեղորայքի, հագուստի ու կոշիկի մասին լռում ենք:



ԱՊԱՇՐՋԱՓԱԿՈՒՄԸ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ

ԲԱՆԱԼԻՆ ԳՑՆՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանը եւ Ադրբեջանը հակընդդեմ հայցեր են ներկայացրել ՄԱԿ-ի արդարադատության միջազգային դատարան:

Հայաստանը Հաագայի դատարանից պահանջում է հրատապ միջոց կիրառել եւ պարտավորեցնել Ադրբեջանին բացել Լաչինի միջանցքը, որը 50 օրից ավելի է՝ փակ է:

Այս երկու հայցերի վերաբերյալ Հաագայի դատարանը առաջիկա շաբաթների ընթացքում որոշումը կկայացնի:

«Ժողովուրդ» օրաթերթը այս հարցերի շուրջ զրուցել է իրավապաշտպան Ավետիք Իշխանյանի հետ:

-Պարոն Իշխանյան, ի՞նչ եք կարծում, ի՞նչ որոշում կկայացնի դատարանը, եւ ի՞նչ ազդեցություն կունենա այն Լաչինի միջանցքի բացման հարցում:

-Միջազգային մակարդակում ցանկացած ոլորտում իրավական ու դիվանագիտական հաջողության գրավականը ոչ թե միջազգային իրավունքն է եւ միջազգային հանրությունը, այլ քաղաքականությունը, կողմերի ուժի գործոնը եւ միջազգային հանրություն կոչվածի աշխարհաքաղաքական եւ տնտեսական շահերը: Հաագայի դատարանում քննվող գործը պետք է դիտարկել այս տեսակետից: Հիշենք Բալկանների ճգնաժամի հետ կապված նույն Հաագայի վճիռները. դրանք միակողմանի, հակասերբական էին, կարծես մյուս կողմերը հանցանքներ չէին գործել: Այսպես պետք է դիտարկել Հաագայում ընթացող դատավարությունը: Ինքս դժվարանում եմ ասել, թե ինչ վճիռ կլինի. հուսանք, որ թերեւս ինչ-որ իմաստով հօգուտ մեզ կլինի: Համոզված եմ, որ նույնիսկ նման վճիռը չի ազդի ադրբեջանական կողմի վրա, եւ Բերձորի ապաշրջափակումը կշարունակվի: Ի տարբերություն հայ «գերազանցիկ առաջադեմների»՝ Ադրբեջանի ղեկավարությունը շատ լավ հասկացել է տարբեր միջազգային կառույցների կողմից ընդունված որոշումների զրոյական գինը:

-Թեեւ տարբեր երկրներ եւ միջազգային կազմակերպություններ պարբերաբար կոշտ հայտարարություններ են անում, կոչ են անում Ադրբեջանին դադարեցնել Լաչինի շրջափակումը, բայց շոշափելի քայլեր այդպես էլ չեն ձեռնարկվում, օրինակ՝ սանկցիաներ: Ի՞նչն է խանգարում, որպեսզի միջազգային հանրությունը խոսքից անցնի գործի:

-Այսօր Ադրբեջանը նույն, այսպես կոչված, միջազգային հանրության կարեւորագույն գործընկերն է, հատկապես՝ էներգետիկայի բնագավառում՝ թիկունքում ունենալով նաեւ Թուրքիա, այնպես որ այդ նույն միջազգային հանրություն կոչվածը, բացի կեղծ մտահոգություններից, որեւէ լուրջ քայլ, պատժամիջոց չի կիրառի Ադրբեջանի նկատմամբ: Հայաստանի ղեկավարությունը շարունակում է իր խեղճուկրակ դիվանագիտությունը. ՀՀ արտգործնախարարը Իսլանդիայի փոխարտգործնախարարի օգնականին ներկայացրել է Լաչինի միջանցքի հետ կապված հումանիտար ճգնաժամը եւ այլն:

-Պարոն Իշխանյան, ի վերջո, ո՞ւմ ձեռքում է այս ճգնաժամի հանգուցալուծման բանալին:

-Բերձորի ճանապարհի բացման բանալին գտնվում է Հայաստանում: Եթե մենք արդեն երրորդ տարին հանդուրժում ենք մեզ պարտության մատնած իշխանությանը, որը բացահայտ Արցախը համարում է Ադրբեջան, ապա ի՞նչ եք կարծում, ինչպիսի՞ վերաբերմունք կլինի մեր նկատմամբ աշխարհի բոլոր երկրների կողմից. արհամարհական: Եվ հավատացե՛ք, որ այդ նույն միջազգային հանրությունը ներքուստ կողջունի Արցախի հնարավոր հայաթափումը, բայց արտաքուստ խիստ մտահոգություններ կարտահայտի եւ հումանիտար օգնություն կտրամադրի փախստականներին: Եթե ցանկանում ենք փրկել Արցախն ու Հայաստանը, որպես առաջին քայլ, պետք է բացել Բերձորի ճանապարհը, ապա պետք է հեռացնել Հայաստանի իշխանությանը: Հավատացնում եմ, որ միջազգային իրավիճակի որոշակի փոփոխություն կլինի՝ հօգուտ մեզ: Իսկ այսօր միակ հույսը մնում է Արցախի անկոտրում ոգին, ուրիշ՝ ոչինչ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՉԻ ՇՓՎՈՒՄ

«Հայաստան» խմբակցության նախկին պատգամավոր Արամ Վարդեւանյանը չի շփվում երբեմնի գործընկերների հետ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նա մեկուսացել է քաղաքական կյանքից, հեռացել գործընկերներից: Նա կապը պահում է միայն ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ նրա մեկ-երկու հավատարիմների հետ, որոնք մնացել են «Հայաստան» խմբակցության մեջ: Վարդեւանյանը հիմնականում ակտիվացել է իր նախկին աշխատանքում՝ փաստաբանական գործունեության մեջ: Ինչո՞ւ է խռովել երբեմնի գործընկերներից. «Ժողովուրդ» օրաթերթի այս հարցին Վարդեւանյանը պատասխանեց, թե չի մեկուսացել եւ կապի մեջ է պատգամավորների հետ:

ԱՆԱՌՈՂՋ ՄԹՆՈԼՈՐՏ

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ներսում անառողջ մթնոլորտ է: «Ժողովուրդ» օրաթերթն իր աղբյուրներից պարզեց, որ պարգեւավճարներ պահանջող 36 պատգամավորների օգնականները, որոնք իրենց ղեկավարների գիտությամբ դիմել էին ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանին եւ աշխատակազմի ղեկավար Վահան Նարիբեկյանին՝ պարգեւավճար ստանալու պահանջով, անհարմար իրավիճակում են: Պարզվում է՝ պատգամավորներից շատերը չեն իմացել, թե ինչ ինտրիգներ են թաղված ստորագրահավաքի հետեւում, եւ հրահանգել են իրենց օգնականներին գնալ ու հետ վերցնել ստորագրությունը: Նրանք չեն ցանկացել դուրս գալ Սիմոնյանի եւ Նարիբեկյանի դեմ, բայց քանի որ այդպիսի ընթացակարգ տեխնիկապես հնարավոր չէ, գործընթացը շարունակվել է զղջացող տեքստերով միայն: Բանն այն է, որ ՔՊ պատգամավորների ստորագրահավաքն ավարտվեց Վահան Նարիբեկյանի՝ աշխատանքից ազատման դիմումով, իսկ պատգամավորներն էլ պարգեւավճար չստացան:

Ու թեեւ բոլոր կողմերը պարբերաբար տարբեր խմբերում ու զրույցներում միմյանց հորդորում են թեման փակել, բայց ամեն մամուլի հրապարակումից հետո նոր բախումների դաշտ է բացվում, եւ ՔՊ ներսում թիմին «թիկունքից խփող», «վարչապետին հարվածող» եւ այլ մեղադրանքներ են հնչում՝ դեռեւս առանց անունների:

Հիշեցնենք, որ ՔՊ շուրջ 36 պատգամավորի օգնական էր միացել ստորագրահավաքին.

1) Հայկ Կոնջորյանի
2) Արթուր Հովհաննիսյանի
3) Խաչատուր Սուքիասյանի
4) Մարիա Կարապետյանի
5) Թագուհի Ղազարյանի
6) Արուսյակ Ջուլհակյանի
7) Ծովինար Վարդանյանի
8) Զարուհի Բաթոյանի
9) Գուրգեն Արսենյանի
10) Վաղարշակ Հակոբյանի
11) Վիլեն Գաբրիելյանի
12) Հայկ Սարգսյանի
13) Հռիփսիմե Հունանյանի
14) Ալխաս Ղազարյանի
15) Արեն Մկրտչյանի
16) Էմմա Պալյանի
17) Անդրանիկ Քոչարյանի
18) Նարեկ Գրիգորյանի
19) Վիգեն Խաչատրյանի
20) Գագիկ Մելքոնյանի
21) Հայկ Ցիրունյանի
22) Արմեն Խաչատրյանի
23) Կարեն Սարուխանյանի եւ այլոց:

ԼՈՒՐԵՐ

ՈՐՈՇԵԼ ԵՆ ԲՈՅԿՈՏԵԼ

ArmLur.am-ի հավաստի տեղեկություններով՝ ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունները երկար քննարկումներից հետո որոշել են բոյկոտել այսօրվա՝ փետրվարի 7-ի ԱԺ նիստը, որի ժամանակ քննարկվելու է Սեյրան Օհանյանին անձեռնմխելիությունից զրկելու հարցը:

Տեղեկացանք, որ նիստը բոյկոտելու առաջարկը դաշնակցականներինն է, ու թեեւ ընդդիմադիր պատգամավորների մի մասի, այդ թվում՝ հենց Սեյրան Օհանյանի սրտով չի եղել սա, բայց, ի վերջո, պատգամավորները համաձայնել են, արդյուքում որոշվել է չգալ ու չմասնակցել նիստին:

ՔՊ-ն ու գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը միայնակ են քննարկելու Օհանյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու հարցը:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ ընդդիմության անունից նախապես հայտարարությամբ հանդես կգա Սեյրան Օհանյանը:

Հիշեցնենք, որ գլխավոր դատախազը քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին միջնորդագիր է ներկայացրել նաեւ պատգամավոր Արմեն Չարչյանի մասով:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ՝ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

2022թ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) Հայաստանի դեմ 31 դիմումների վերաբերյալ կայացրել է 21 վճիռ: Դատարան ներկայացված 177 դիմում չի ընդունվել, իսկ 48-ը փոխանցվել է կառավարությանը: Այս մասին տեղեկանում ենք ՄԻԵԴ տարեկան ամփոփիչ զեկույցից:

Ամենաշատ խախտված իրավունքը ազատության եւ անվտանգության իրավունքն է (7 վճիռ) եւ անմարդկային եւ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից պաշտպանված լինելու իրավունքը (6 վճիռ):

2022թ. ՄԻԵԴ-ը ստացել է Հայաստանի դեմ գործերով միջանկյալ միջոցների կիրառման 12 միջնորդություն: Որեւէ միջնորդություն չի բավարարվել. 7 դեպքում նման միջոցները մերժվել են: Ազատության եւ անվտանգության իրավունքը ամենաշատ խախտված իրավունքն է (60 վճիռ), որին հաջորդում են արդար դատաքննության իրավունքը (52 վճիռ) եւ սեփականության պաշտպանության իրավունքը (37 վճիռ):

Արդեն այս տարի դատարանը Հայաստանում մարդու իրավունքների խախտման հերթական դեպքն է արձանագրել ու կառավարությանը պարտավորեցրել փոխհատուցել Ոսկանյանների ընտանիքին 12 տարի առաջ բանտում մահացած Սլավիկ Ոսկանյանի կյանքի իրավունքը խախտելու համար. հայտնում է «Ազատություն»-ը:

Վերջինս երկշաբաթյա կալանքից հետո մահացել էր Վանաձորի քրեակատարողական հիմնարկում 2010-ի հոկտեմբերին: Նա կասկածվում էր ոստիկանության գնդապետի մորը սպանելու համար: Եվրոպական դատարանն արձանագրել է. «Սլավիկ Ոսկանյանը բժշկական օգնություն է խնդրել: Վեց օր անց միայն նրան հիվանդանոց տեղափոխելու որոշում է կայացվել, բայց արդեն շատ ուշ էր նրա կյանքը փրկելու համար»:

12 տարի առաջ ամուսնուն կորցրած կինը՝ Շուշանիկ Ոսկանյանը, 20 հազար եվրո կստանա պետությունից:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԴԵՌԵՎՍ ՉԵՆ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԻ

5. «Ինքնկանան կրթության և սպորտի մասին» տեղեկով քարտաներ եւ փոփոխություն կատարելու մասին (հանրագր բնույթով) — Ն-475-19.12.2022-Գ-Ս10 — Հարցնում է ՀՀ կառավարությունն

6. ա) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության տեղեկագրում լրացումներ կատարելու մասին — Ն-491-17.01.2023-Գ-Ս10 — Հարցնում է ՀՀ կառավարությունն

բ) «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին — Ն-491-17.01.2023-Գ-Ս10 — Հարցնում է ՀՀ կառավարությունն

7. «Դրության մասին» տեղեկում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին — Ն-492-17.01.2023-Գ-Ս10 — Հարցնում է ՀՀ կառավարությունն

8. Ազգային ժողովի պատգամավոր Սեյրան Մուշեղի Օհանյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու մասին — 495-20.01.2023-Ս12.0

9. Ազգային ժողովի պատգամավոր Սեյրան Մուշեղի Օհանյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու մասին — 496-20.01.2023-Ս12.0

10. ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Սեյրան Օհանյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու մասին (լրացում) — 497-23.01.2023-Ս12.0

11. Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Գերասիմի Չարչյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու մասին — 498-23.01.2023-Ս12.0

12. «Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայության իրականացնելու մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին — 506-27.01.2023

13. Արտաքին հարաբերությունների գծով հանձնաժողովի նախագահի ընտրության — 509-03.02.2023

2. Ազգային ժողովի կանոնակարգը փոփոխելու մասին՝ 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2023 թվականի փետրվարի 7-ին գումարվող նիստերի օրակարգում ընդգրկել հետևյալ հարցերը.

Հարցի անվանումը — Հոդված և հիմնավորումը

1. ա) Դաշնային իրավասությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության տեղեկագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին — Ն-357-22.08.2022-ՍՏՊ-Ս10 — Հարցնում է ՀՀ կառավարությունն

բ) «Ներքին գործերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին — Ն-357-22.08.2022-ՍՏՊ-Ս10 — Հարցնում է ՀՀ կառավարությունն

Ինչպես ArmLur.am-ը եւ «Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս գրել էին, ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը խորհրդարան կմտնի «Հայաստան» խմբակցության երկու պատգամավորների նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու միջնորդությամբ: Սեյրան Օհանյանի մասով 3 միջնորդություն է ներկայացված (լուսանկարում 8, 9, 10), որից մեկը գաղտնի է՝ կապված ՊՆ զենքերի մատակարարման թեմայի հետ:

Բոլոր միջնորդությունները «Քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին» են: Մեկ միջնորդություն էլ «Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Գերասիմի Չարչյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին» է: Նկատենք, որ երկու պատգամավորների դեպքում էլ կալանավորելու միջնորդությամբ դատախազը հանդես չի եկել: Սա նշանակում է, որ ընդդիմադիր պատգամավորները չեն կալանավորվի, այլ միայն նրանց նկատմամբ կհարուցվի քրեական գործ, կկատարվի քննություն: Ասել է թե՝ այս փուլում պատգամավորները դեռեւս միայն կզրկվեն իրենց անձեռնմխելիությունից:

Կասկած չկա, որ 71-հոգանոց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունում կգտնվեն պատգամավորներ, որոնք «կողմ» կքվեարկեն Չարչյանին եւ Օհանյանին անձեռնմխելիությունից զրկելու՝ դատախազի միջնորդությանը:

Նշենք, որ Սեյրան Օհանյանին անձեռնմխելիությունից զրկելու՝ դատախազության երեք միջնորդություններից մեկը խորհրդարանում կքննարկվի փակ նիստով, քանի որ այն գաղտնի ռեժիմով է խորհրդարան եկել: Մյուս երկու միջնորդություններն արդեն կքննարկվեն բաց նիստով, որի ժամանակ էլ, ԱԺ պատգամավորների մեծամասնության որոշմամբ, Օհանյանը կզրկվի պատգամավորական անձեռնմխելիությունից:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՔՊ-ն թեեւ վերջնական որոշում չունի այս մասով, բայց, ամեն դեպքում, մեծամասնությունը տրամադրված է համաձայնություն տալ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում սկսելուն: Պատճառն էլ այն է, որ չեն ցանկանում հակադրվել դատախազության որոշմանը:

ԱՄՓՈՓ

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԶՐԿՎԵԼ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԻՑ

Փետրվարի 7-ին ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը գալու է խորհրդարան, որպեսզի ներկայացնի ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի եւ Արմեն Չարչյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու միջնորդությունները: Սեյրան Օհանյանի հանդեպ միջնորդությունը երեք դրվագից է, որից մեկը՝ գաղտնի: ArmLur.am-ը ներկայացնում է, թե նորանկախ Հայաստանում քանի անգամ են գլխավոր դատախազները նման միջնորդություններով եկել խորհրդարան:

1996 թվականի նախագահական ընտրություններից հետո Երեւանում բազմամարդ հավաքներ ու ցույցեր էին: Սեպտեմբերի 26-ին ԱԺ արտահերթ նիստում պատգամավորների միջեւ ծեծկռտուք էր եղել: Դրանից հետո ԱԺ-ում քննարկվեցեւ բավարարվեց գլխավոր դատախազի միջնորդությունը՝ պատգամավորական անձեռնմխելիությունից զրկելով Մուշեղ Մովսիսյանին, որը մեղադրվում էր այդ հանցագործությունն իրականացրած անձանց հետ համագործակցելու համար:

2008 թվականի մարտ 1-ի իրադարձություններից հետո՝ մարտի 4-ին, ԱԺ-ում հրավիրվել էր արտահերթ նիստ՝ քննարկելու պատգամավորներ Հակոբ Հակոբյանին, Մյասնիկ Մալխասյանին, Սասուն Միքայելյանին, Խաչատուր Սուքիասյանին որպես մեղադրյալ ներգրավելու եւ նրանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու թույլտվություն տալու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի միջնորդագրի մասին հարցը: Նրանք մեղադրվում էին զանգվածային անկարգությունների համար, որոնք ուղեկցվել են սպանությամբ եւ իշխանությունը բռնությամբ տապալելուն ուղղված գործողություններով: Ազգային ժողովը բավարարել էր միջնորդությունը, եւ Սասուն Միքայելյանը դատապարտվել էր 8 տարվա ազատազրկման, բայց 2011 թվականին համաներմամբ ազատ արձակվել: Մյասնիկ Մալխասյանը եւ Հակոբ Հակոբյանը դատապարտվել էին 5 տարվա ազատազրկման եւ համաներմամբ ազատ արձակվել 2009թ.-ին: Խաչատուր Սուքիասյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել էր 2011թ.-ին, երբ նա այլեւս Հայաստանում չէր:

2012թ.-ին արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանյանն անձեռնմխելիությունից զրկվեց «փողերի լվացման» մեղադրանքով հարուցված քրեական գործի շրջանակներում: Գլխավոր դատախազությունը միջնորդություն էր ներկայացրել, ըստ որի՝ «Սիվիլիթաս» հիմնադրամի հիմնադիր եւ հոգաբարձուների խորհրդի նախագահ Վարդան Օսկանյանը յուրացրել էր բարեգործական նպատակներով իր միջոցով հիմնադրամին տրամադրելու նպատակով իրեն վստահված առանձնապես խոշոր չափերի դրամական միջոցները:

2018թ. հունիսին ԱԺ նիստում քննարկվեց եւ բավարարվեց գլխավոր դատախազի միջնորդագիրը՝ ԱԺ ՀՀԿ խմբակցության պատգամավոր Մանվել Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու վերաբերյալ: Մանվել Գրիգորյանը զրկվեց անձեռնմխելիությունից:

2020թ.-ի հունիսի 16-ի ԱԺ նիստում քննարկվեց ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի միջնորդագիրը, եւ խորհրդարանը քվեարկությամբ համաձայնություն տվեց դրան:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՅՑ՝ ԲԵՌԼԻՆ

Փետրվարի 6-7-ը ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն աշխատանքային այցով կգտնվի Բեռլինում:

Նա հանդիպում կունենա Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարար Անալենա Բերբոքի հետ, որից հետո նախարարները հանդես կգան մամուլի ասուլիսով:

Այցի շրջանակներում Արարատ Միրզոյանը հանդիպումներ կունենա նաեւ Գերմանիայի օրենսդիր մարմինների, փորձագիտական հանրության ներկայացուցիչների հետ:

ԱԳՆ լրատվության եւ հանրային դիվանագիտության վարչությունից հայտնում են, որ իր հանդիպումների ընթացքում նախարար Միրզոյանն անդրադարձ կկատարի Հայաստան-Գերմանիա եւ ՀՀ-ԵՄ փոխգործակցության ընդլայնման հարցերին, Հարավային Կովկասում կայունության եւ անվտանգության մարտահրավերներին, Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում ստեղծված հումանիտար ճգնաժամին, Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացին եւ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի:

ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

«Վշտացած եմ Թուրքիայում եւ Սիրիայում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի լուրից, որը հանգեցրել է բազմաթիվ մարդկային կյանքերի կորուստի: Մեր խորին ցավակցություններն ենք հայտնում զոհվածների ընտանիքներին, իսկ վիրավորներին մաղթում ենք շուտափույթ ապաքինում: Հայաստանը պատրաստ է օգնություն ցուցաբերելու»,- այս մասին իր սոցիալական ցանցում գրել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

ՆԻՍՏԻՆ ՉԻ ՄԱՄՆԱԿՑԻ

ՀՀ Ազգային ժողովի խորհրդի երեկվա նիստը գրեթե ամբողջությամբ նվիրված էր «Հայաստան» խմբակցությանը: Նախ՝ ԱԺ նիստերի օրակարգի հաստատմամբ՝ այդ խմբակցության երկու պատգամավորների նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին հարցն էր՝ Սեյրան Օհանյանի եւ Արմեն Չարչյանի: Բացի այդ, նաեւ մոտ 5 կետով «Հայաստան» խմբակցության վերադասավորումներն են այս կամ այն բարեկամական խմբում, միջազգային կառույցներում:

Բանն այն է, որ ընդդիմադիր ամենամեծ խմբակցության անդամներից

Դավիթ Սեդրակյանը,
Արթուր Ղազինյանը,
Արամ Վարդեւանյանը,
Ելենա Կիրակոսյանը,
Մխիթար Զաքարյանը,
Վահե Հակոբյանը,

Հռիփսիմե Ստամբուլյանն այս ընթացքում հրաժարվեցին պատգամավորական մանդատներից, եւ նրանց փոխարինել են նոր մարդիկ՝ «Հայաստան» դաշինքի ընտրացուցակից, որոնց մեծ մասը «Դաշնակցության» քվոտայով անցած պատգամավորներ են:

Բայց, չնայած այս իրողությանը, ընդդիմությունը չի մասնակցի ԱԺ խորհրդի նիստին:

ՊԱՐՏՔ

«ՕՐԵՆՔՈՎ ԳՈՂԵՐԻՆ» ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՆ ԱՌԱՋԱԴՐՎԵԼ

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված եւ թմրամիջոցների աղօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչությունում իրականացված քննության արդյունքում դարզվել են քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ղեկավարելու, հիշյալ խմբավորմանը մասնակցելու, ինչպես նաեւ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու դեպքերի մի շարք հանգամանքներ:

ՀՀ քննչական կոմիտեի քննիչների եւ ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից ձեռնարկված համատեղ քննչական եւ օպերատիվ-հետախուզական ծավալուն եւ համակարգված միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող Ա.Ք.-ն ղեկավարել է քրեական ենթամշակույթ կրող խմբավորում. իր անօրինական ազդեցությունն օգտագործելով՝ մասնավոր հարցին առնչվող վեճը լուծելու համար քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամներին տվել է հանձնարարություններ, ինչպես նաեւ հետապնդվող նպատակներին հասնելու համար անձամբ կատարել գործողություններ: Իրենց հերթին հիշյալ խմբավորման անդամները, ստանալով Ա.Ք.-ի հանձնարարությունները, մասնակցել են քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը եւ ներգրավվել են դրա հետապնդած նպատակների իրականացմանը:

Մասնավորապես, 2022թ. սեպտեմբերի դրությամբ շարունակելով պահպանել քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակը՝ սեպտեմբերի 15-ին Ա.Ք.-ն խմբավորման անդամ Ա.Թ.-ին հանձնարարել է 10.000 ԱՄՆ դոլար պարտքի վերադարձը կազմակերպելու խնդրանքով իրեն դիմած անձի պարտապանին նշված գումարով ներկայացնել իր մոտ: Կատարելով հանձնարարությունները՝ վերջինս մի քանի անգամ այցելել է պարտապանի բնակության վայր: Այդ ընթացքում Ա.Թ.-ն կազմակերպել է նաեւ պարտապանի եւ Ա.Ք.-ի հեռախոսազրույցը, որի ընթացքում վերջինս պահանջել է առավոտյան գումարը բերել՝ հակառակ դեպքում խոստանալով խնդիրներ ունենալ իրենց հետ: Հաջորդ առավոտյան Ա.Թ.-ն, շարունակելով կատարել Ա.Ք.-ի հանձնարարությունը, չի կարողացել գտնել պարտապանին, որից հետո՝ սեպտեմբերի 17-ին, նպաստել է Ա.Ք.-ի կողմից անօրինական՝ 350.000 ՀՀ դրամ գումարը ստանալուն:

Բացի այդ, Ա.Ք.-ն, օգտագործելով իր հեղինակությունը, Հայաստանում գործող կոնյակի գործարաններից մեկի մասնաճյուղի վերամշակված խաղողի մնացորդի վաճառքի իրավունքին ապօրինի տիրանալու նպատակով 2022թ. սեպտեմբերի 23-ին խմբավորման անդամ Ա.Ն.-ին հանձնարարել է գաղտնի ճշտել ու իրեն տեղեկատվություն տրամադրել այն մասին, թե հիշյալ մասնաճյուղի վերամշակված խաղողի մնացորդն ով է դուրս հանում եւ վաճառում, ինչպես նաեւ ում ավտոմեքենայով է խաղողի մնացորդը մասնաճյուղի տարածքից դուրս հանվում: Ա.Ն.-ն, կատարելով քրեական ենթամշակույթ կրող խմբավորման ղեկավար Ա.Ք.-ի հանձնարարությունը, ճշտումներ է կատարել ու վերջինիս տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը, որից հետո Ա.Ք.-ն նույն օրը հանդիպել է հիշյալ գործարանի երկու աշխատակցի եւ պահանջել իրեն տրամադրել նշված մասնաճյուղում խաղողի վերամշակումից ստացված մնացորդի վաճառքի իրավունքը եւ առանց պայմանագրի մթերված խաղողի յուրաքանչյուր կիլոգրամից 20 ՀՀ դրամ օգուտը՝ սպառնալով, որ կվնասի գործարանի մասնաճյուղի գույքը, եթե իր պահանջները չկատարվեն:

Քննությամբ պարզվել է նաեւ, որ 2022 թվականի սեպտեմբերի 28-ին, տեղեկանալով Ա.Հ.-ի կողմից այլ անձի հետ ունեցած գումարային խնդիրների մասին, խոստացել է անձամբ զբաղվել նշված մասնավոր հարցի լուծմամբ եւ այդ նպատակով իր մտերիմին հանձնարարել է Ա.Հ-ի եւ վերջինիս հարազատների հետ մասնակցել գումարային հարցերի պարզաբանումներին՝ հրահանգելով ոչ ցանկալի ելքի դեպքում ընդհատել խոսակցությունն ու հարցի քննարկումը թողնել հաջորդ օրվան քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամների սահմանած «գողական» կանոններով լուծելու համար: Դրանից հետո Ա.Ք.-ն անձամբ հանդիպել է Ա.Հ.-ին եւ խոստացել քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից սահմանված եւ ճանաչված վարքագծի կանոնների համաձայն լուծել վերջինիս գումարային վեճը:

Ա.Ք.-ն ձերբակալվել է: Հարուցված քրեական հետապնդման հիման վրա՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող Ա.Ք.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 323-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, խմբավորման անդամներ Ա.Թ.-ին եւ Ա.Ն.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ Ա.Հ.-ին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով:

Ա.Ք.-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Քրեական վարույթի շրջանակներում Արմավիր քաղաքում եւ հարակից գյուղերում կատարվել են միաժամանակյա 10-ից ավելի խուզարկություններ, որոնց արդյունքում հայտնաբերվել են վարույթի համար հետաքրքրություն ներկայացնող փաստաթղթեր, առարկաներ, իսկ Ա.Ք.-ի բնակարանում կատարված խուզարկությամբ, ի թիվս այլ առարկաների, հայտնաբերվել է նաեւ թմրամիջոց: Նախաքննությունը շարունակվում է:

ԼԻԱՔՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԱՐԱՇԱՀԵԼՈՒ ՄԵՂԱԴՐԱՆՔ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով իրականացված նախաքննությամբ հիմնավորվել է, որ 2017-2022թթ.-ին Քերդ խոշորացված համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած Հ. Մ.-ի որդին՝ Ա. Մ.-ն, առանց համապատասխան շինարարության թույլտվության, 2015-2016թթ. Քերդ քաղաքում կառուցել է 1088,71 քմ մակերեսով ինքնակամ շինություններ, որոնք օրինականացնելու նպատակով Քերդ խոշորացված համայնքի նախկին ղեկավարը, չարաշահելով իր պաշտոնեական դիրքը, շահադիտական դրդումներով կատարել է պաշտոնեական կեղծիք:

Մասնավորապես, տեղեկացված լինելով որդու՝ ինքնակամ շինություններով եռահարկ առանձնատուն կառուցելու հանգամանքի մասին՝ Հ. Մ.-ն միջոցներ չի ձեռնարկել դրանց շինարարությունը ժամանակին կասեցնելու, ինչպես նաեւ որդու նկատմամբ վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու ուղղությամբ, փոխարենը 2017 թվականի մարտի 13-ին որդուն հատկացրել է շինարարության թույլտվության վերաբերյալ կեղծ բովանդակությամբ պաշտոնական փաստաթուղթ, որում ձեւականորեն ներառել է արդեն իսկ կառուցված բնակելի տան շինարարական աշխատանքներն իբրեւ ապագայում իրականացված լինելու ժամկետները եւ այլ տվյալներ: Այնուհետեւ՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ին, կազմել եւ տրամադրել է մեկ այլ պաշտոնական կեղծ փաստաթուղթ՝ ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ, որում ներառել է իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ այն մասին, թե, իբրեւ, շինարարական աշխատանքները սկսվել են 2017 թվականի մայիսի 14-ին եւ ավարտվել 2019 թվականի հոկտեմբերի 14-ին:

Արդյունքում Ա. Մ.-ի կողմից կառուցված ինքնակամ շինությունները սահմանված կարգով չեն օրինականացվել, որի հետեւանքով Բերդ համայնքի բյուջե չի մուտքագրվել քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարման ենթակա 1.197.581 ՀՀ դրամը, ինչն էական վնաս է պատճառել Բերդ համայնքի շահերին:

Վերը նշված հանցավոր արարքների կատարման համար Հ. Մ.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով եւ 314-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագ), իսկ Ա. Մ.-ին՝38-308-րդ հոդվածի 1-ին մասով, 38-314-րդ հոդվածի 1-ին մասով (երկու դրվագ) եւ 325-րդ հոդվածի 1-ին մասով:

Պետությանը պատճառված վնասը նախաքննության ընթացքում ամբողջությամբ վերականգնվել է: Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է: Վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, հանձնվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԼՈՒՐԵՐ

ԿԵՂԾ ԳՈՐԾԱՐՔ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Մակար Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով «Դրակոնբոութի ազգային ֆեդերացիա» ՀԿ-ի նախագահ, նախնական համաձայնության գալով եղբոր՝ Գոռ Սարգսյանի հետ, 2022 թվականի փետրվար-ապրիլ ամիսներին շահադիտական նպատակով կազմակերպել է Արսեն Մարտիրոսյանի, Սերգեյ Ասոյանի, Դավիթ Արմենյանի, Ռաֆիկ Եփրեմյանի, Նորայր Եգորյանի, Սիլվիա Կիրակոսյանի, Վահրամ Ուրուշանյանի, Վարուժան Գեւորգյանի, Ալիկ Հովսեփյանի, Էդգար Գեւորգյանի, Գագիկ Թարվերդյանի, Մարինե Գրիգորյանի, Մարկոս Պապյանի, Արամ Արամյանի, Արմեն Հովհաննիսյանի, Սարգիս Պողոսյանի, Արշալույս Սամվելյանի եւ Հովհաննես Պապիկյանի մուտքն ու գտնվելն Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որը կատարվել է՝ մուտքի եւ գտնվելու պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ փաստաթղթեր եւ տեղեկություններ ներկայացնելով, իսկ Մակար Սարգսյանը, օգտագործելով նաեւ իր կնոջ՝ Աննա Սարգսյանի անվամբ բացված հասարակական կազմակերպությունների կնիքները, այլ անձի կողմից օգտագործելու նպատակով պատրաստել է կեղծ փաստաթղթեր: Գործը դատարանում է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԽՍՏԱՑՈՒՄՆԵՐ ԿԼԻՆԵՆ

Հայաստանի ոստիկանությունը մտադիր է քաղաքացիների մոտ գտնվող զենքերի նկատմամբ վերահսկողություն սահմանել: Այսինքն՝ ոստիկանությունը փորձում է զենքի շրջանառության նկատմամբ վերահսկողությունն ուժեղացնել, ոստիկանությունում հաշվառված զենքերի անօրինական վաճառքը կանխել: ArmLur.am-ը տեղեկացավ, որ «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ քաղաքացին Հայաստանից 180 օրից ավելի բացակայելու դեպքում զենքն ի պահ է հանձնում ոստիկանության տարածքային ստորաբաժանմանը:

Եթե երկրից բացակայելու դեպքում քաղաքացին զենքն ի պահ չի հանձնում ոստիկանությանը, կամ ոստիկանության համապատասխան պաշտոնատար անձին տեւական ժամանակ անհասանելի են դառնում զենքի սեփականատեր-քաղաքացու բնակության վայրում զենքի առկայությունը եւ այն պահելու պայմանները ստուգելը, ապա զենքը հաշվառվում է ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում որպես վերահսկողությունից դուրս մնացած զենք: Ոստիկանությունում հույս ունեն, որ այս ամենի արդյունքում հնարավոր կլինի կանխել այդ զենքերի վաճառքը եւ վերագրանցումը:

ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 3-ից 6-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 97 դեպք, որոնցից 9-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ՄԻ ԿԵՐՊ ԻՐԱՑՐԵԼ ԵՆ

2022 թվականի աշնանը Բերդ համայնքի սահմանամերձ Չինարի բնակավայրի վարչական ղեկավար Սամվել Սաղոյանը հայտնել էր, որ Բերդ համայնքի Չինարի եւ Այգեձոր գյուղերում մոտ 50 տոննա կորոլյոկի (արքայանարնջի) բերք կա, սակայն այն չի իրացվում, անգամ կիլոգրամը 200 դրամով գնորդներ չկան: Վարչական ղեկավարն ասել էր, որ կորոլյոկի բերքը չիրացվելու դեպքում գյուղացիները դրանից օղի են թորելու: Ս. Սաղոյանին հարցրի, թե գյուղացիներին աշնանը հաջողվեց արդյոք կորոլյոկի բերքը ծախել, նա ասաց, որ գյուղացիները կորոլյոկի բերքի մի մասն էժան՝ կիլոգրամը 100-150 դրամով վաճառեցին գյուղ եկած գնորդներին, մի մասը տարան Գեղարքունիքի մարզ՝ Վարդենիս, Մարտունի, եւ այնտեղ փոխանակեցին կարտոֆիլի հետ: Ս. Սաղոյանն ասաց՝ սահմանամերձ Չինարիում չրի երկու արտադրամաս կա, որոնց տերերը գնեցին գյուղի կորոլյոկի բերքի մի մասը: Այնուամենայնիվ, բերքն ամբողջությամբ չի իրացվել, եւ մնացած կորոլյոկը այգետերերը տեղավորել են տակառներում, որպեսզի գարնանը կորոլյոկի օղի թորեն: Կորոլյոկի օղին գյուղացիների շրջանում լավ համբավ եւ պահանջարկ ունի:

ՋՐԱՀԱՎԱՔ Է ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼ

Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում (tavush.mtad.am) տեղադրված է հայտարարություն այն մասին, որ փետրվարի 7-ին նշանակված է Տավուշի մարզխորհրդի նիստ: Նիստի օրակարգի 4-րդ հարցը հետեւյալն է. «2022 թվականի ձմեռային զորակոչի արդյունքների եւ 2023 թվականի գարնանային զորահավաքի նախապատրաստական աշխատանքների մասին: Զեկուցող՝ Գ. Մատինյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստական բաժնի վարիչ»:

Մասնակի կամ ընդհանուր զորահավաք հայտարարում են պատերազմի ժամանակ: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը վարչապետ Նիկոլ Փաշինյանի դասընկերն ու հարսանիքի քավորն է. մարզպետը գուցե ինչոր բան գիտի գարնանը սպասվող պատերազմի մասին: Կարելի է նաեւ ենթադրել, որ «զորահավաք» բառն օգտագործելը Տավուշի մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային անփութության հետեւանք է:

Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը հանդիպել է Լայպցիգի արհեստագործական դպրոցի եւ «Մասնագիտական կրթություն եւ ուսուցում (ՄԿՈՒ) -համագործակցություն Հարավային Կովկասում» ծրագրի ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը ներկա են եղել նաեւ ԿԳՄՍՆ նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության վարչության պետի պարտականությունները կատարող Արմենուհի Պողոսյանը եւ մասնագիտական կրթության եւ ուսուցման բաժնի պետ Կարեն Մանուկյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նախնական եւ միջին մասնագիտական կրթության ոլորտում մեկնարկող համագործակցության նոր ծրագրերը: «Բիզնես եւ կրթություն գործընկերություն» հիմնադրամը (ԲԿԳ) եւ «Բիզնես եւ կրթություն» ասոցիացիան Գերմանիայի Դաշնային Հանրապետության Լայպցիգի արհեստագործական պալատի հետ 2023 թ. հունվարից նախատեսում են սկսել նոր ծրագրեր՝ ուղղված մասնագիտական կողմնորոշման զարգացմանը եւ շինարարության ոլորտում նոր մասնագիտական ծրագրերի իրականացմանը: «Բիզնես եւ կրթություն գործընկերություն» հիմնադրամի նախագահ Մարինե Ժամկոչյանը ներկայացրել է ՄԿՈՒ հաստատությունների հետ նախատեսվող ծրագիրը՝ կարեւորելով նախարարության հետ համագործակցությունը ոլորտային բարեփոխումների շրջանակում: ԿԳՄՍ նախարարի տեղակալը, ողջունելով հյուրերին, նշել է, որ մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտը կրթության զարգացման կարեւորագույն ուղղություններից է: Ըստ փոխնախարարի՝ ոլորտի զարգացմանը մեծապես կնպաստի «Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին» օրենքի նախագիծը, որը նոր հեռանկարներ կբացի ՄԿՈՒ հաստատությունների հզորացման համար:

«Մասնագիտական կողմնորոշումը մարդկային կապիտալի եւ հանրային զարգացման ուղիղ գործիքներից է, որի շարունակական բարելավումն ու վերափոխումը կարեւորագույն խնդիր է: Այդ առումով մենք շեշտադրել ենք մի քանի առաջնահերթություն ու մասնագիտական կողմնորոշման եւ կարիերայի զարգացման հարցը դիտարկում ենք իբրեւ ինստիտուցիոնալ խնդիր»,- նշել է Արաքսիա Սվաջյանը՝ընդգծելով, որ այս համատեքստում հանրակրթության պետական չափորոշչի ներդրման շրջանակում կան դպրոցներ, որտեղ փորձարկվում են «Մասնագիտական կողմնորոշում» դասընթացի ծրագրերը:

«Մեր նպատակն է նպաստել սովորողների մասնագիտության գիտակցված ընտրությանը՝ ըստ անձի հետաքրքրությունների, կարիքների եւ առանձնահատկությունների: Մենք նաեւ կարեւոր ենք համարում ձեւավորել աշխատաշուկայում մրցունակ աշխատուժի պահանջարկ՝հիմքում դնելով մասնագիտական գիտակից ընտրության հնարավորությունը: Մեր համագործակցությունը կարող է միտված լինել ինչպես ընդհանուր համակարգի զարգացմանը, այնպես էլ համապատասխան մասնագիտությունների ներդրմանը»,- ասել է Արաքսիա Սվաջյանը: Ըստ աղբյուրի՝ հյուրերը ներկայացրել են գերմանական փորձը՝ մասնավորապես անդրադառնալով աշխատանքի վրա հիմնված ուսուցման մոդելին, որը նախ կիրառվել է փորձնական ծրագրերով, այնուհետեւ դարձնել ինստիտուցիոնալ:

Նշվել է, որ աշխատանքի վրա հիմնված ուսուցման մոդելի ներդրումը համակարգային կդառնա նաեւ ՀՀ-ում նոր օրենքի ընդունումից հետո: Միջազգային գործընկերները հետաքրքրվել են նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության ոլորտում ընթացող օրենսդրական բարեփոխումների շրջանակում առաջարկվող կարգավորումներից ու մեխանիզմներից: ԿԳՄՍՆ նախնական եւ միջին մասնագիտական կրթության վարչության պետի պարտականությունները կատարող Արմենուհի Պողոսյանը հյուրերին տեղեկացրել է, որ ոլորտի բարելավման ու զարգացման համար կատարվել են մի շարք փոփոխություններ, իրագործվել են փորձնական ծրագրեր, մշակվում են օրենսդրական փոփոխությունների առաջարկներ: «Օրենսդրական բարեփոխումների հիմքում ընկած է նաեւ միջազգային փորձը, որն իր նպաստը կբերի համակարգի կատարելագործմանը եւ ուղղված կլինի աշխատաշուկայում պահանջված որակյալ մասնագետների պատրաստմանը, սոցիալական գործընկերության խթանմանը»,- նշել է Արմենուհի Պողոսյանը: Հանդիպմանն ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցության ընդլայնմանը միտված մի շարք աշխատանքային հարցեր:

ՄԱՐԶ

ՄԱՐԶՊԵՏԸ ԹԱՔՑՆՈՒՄ Է

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը ժամկետային զինվորական ծառայություն չի անցել: Հայկ Ղալումյանին «Ժողովուրդ» օրաթերթը հարցում էր ուղարկել՝ խնդրելով պարզաբանել, թե ինչ պատճառով նա բանակում չի ծառայել: Ի պատասխան մեր հարցմանը՝ նշված էր. «Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը պարտադիր զինվորական ծառայությունից ազատվել է՝ տվյալ ժամանակահատվածում գործող օրենքի պահանջներին համապատասխան»:

Մարզպետը, ըստ էության, թաքցրել է բանակում իր չծառայելու պատճառը: Նա 1990-ական թվականներին չի մասնակցել Տավուշի մարզի սահմանների պաշտպանությանը, թեեւ այդ ժամանակ չափահաս էր: 2020թ. հոկտեմբերի 21-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը դիմեց բոլոր հայ տղամարդկանց՝ նրանց կոչ անելով զենք վերցնել եւ մեկնել Արցախ: Առաջիններից մեկն արձագանքեց նրա հարսանիքի քավոր, այդ ժամանակ Իջեւան համայնքի ղեկավարի պաշտոնակատար Հայկ Ղալումյանը: Վերջինս հետեւյալ կոչով դիմեց իր հայրենակիցներին. «Հայրենիքի պաշտպանության սրբազան առաքելության համար ստեղծվում է «Իջեւան» կամավորական ջոկատը: Հայրենիքի առջեւ իմ սուրբ պարտքը կատարելու համար առաջինն եմ կամավորագրվում այս ջոկատին: Կոչ եմ անում բոլորիդ համախմբվել եւ միասին կերտել մեր նորօրյա հաղթանակը: Վստահ եղեք, որ մենք առաջնագիծ ենք մեկնում մեր վերջնական ու անշրջելի հաղթանակն ամրագրելու համար»: Այդ ջոկատը, Տավուշի մարզում մի քանի օր վարժանքների մասնակցելով, Արցախ չմեկնեց, նաեւ չմեկնեց Տավուշի սահմանագոտին պաշտպանելու: Ջոկատն ինչո՞ւ Արցախ չմեկնեց, չմասնակցեց Տավուշի մարզի սահմանների պաշտպանությանը: Այդ մասին «Ժողովուրդ» օրաթերթի հարցումին Տավուշի մարզպետը պատասխանել է. «Կամավորական սկզբունքով կազմավորվել է ջոկատ, որը հանդերձավորվել, սպառազինվել եւ անցել է նախապատրաստական վարժանքներ x զորամասում: Կամավորական ջոկատի կիրառման բոլոր հարցերը կոորդինացվել են ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան ծառայությունների կողմից: Ծառայության համար իմ կողմից ստացված ամբողջ գումարը փոխանցվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամին»: Արցախ մեկնելու համար կամավորագրվածներից մեկը, որը խնդրեց իր անունը չհրապարակել, հայտնեց. «Ես էլ եմ այդ գումարտակից եղել, մի 5-6 օր գնացինք, պարապեցինք, որ պետք է տանեին Տավուշի դիրքեր, հետո ասացին՝ գնացե՛ք, ձեր տներում պատրաստ սպասեցե՛ք, մինչեւ կկանչենք. այդպես էլ չկանչեցին: Հետո երկու ամսվա համար մի 200 հազար դրամ տվին, չգիտեմ՝ ինչի համար»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 29 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 42-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՇՏ

ԳՈՐԾԱՎԱՐԸ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ Է

Գայանե Արտյոմի Եղիազարյան

Հերթական համար | 053
Ծննդյան թիվ | 11.10.1975
Կուսակցություն | «Քաղաքացիական պայմանագիր»
Խմբակցություն | 06.06.2022 «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն
Հանձնաժողով | 21.06.2022 Աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով
Անդամակցություն | Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի բարեկամական խմբեր

Ծնվել է 1975թ. հոկտեմբերի 11-ին Երեւանում:

1993-1994թթ. աշխատել է Երեւանի հաստոցաշինական գործարանի բնական քարերի արտադրամասի որակի պատասխանատու: 1997-2000թթ.՝ «Նարեկ» լիակատար տնտեսական ընկերակցության որակի պատասխանատու: 2000-2003թթ.՝ «Նարեկ Տոպազ» ՍՊԸ որակի պատասխանատու: 2016-2018թթ.՝ «Տուր Ըղվայս» տուրիստական գործակալության տնտեսական բաժնի պատասխանատու:

2018-2020թթ.՝ «Քաղաքացիական պայմանագիր» վերադարձի հիմնադրամի Աջափնյակի գրասենյակի գործավար: 2020-2022թթ.՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Աջափնյակի տարածքային կառույցի գործավար:

2013-2015թթ. եղել է «Քաղաքացիական պայմանագիր» հանրային-քաղաքական միավորման անդամ: 2015 թվականից՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հիմնադիր անդամ: 2018-2022թթ.՝ Երեւանի ավագանու անդամ («Իմ քայլը» դաշինք):

2022թ. հունիսի 6-ին ԱԺ պատգամավոր է ընտրվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համապետական ընտրական ցուցակով:

Ամուսնալուծված է, ունի երկու զավակ:

Հայաստանի Ազգային ժողովի ինտելեկտուալ եւ քաղաքական նշաձողը օրեցօր իջնում է: Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն անկիրթ կամ թերուս պատգամավորների մղում է նաեւ դիվանագիտական դաշտ:

ԱԺ խորհրդի երեկվա նիստում ներառված են ԱԺ բարեկամական խմբերի անդամների փոփոխություններ, ըստ որոնց՝

Հայաստան-Սինգապուր բարեկամական խմբում ԿԸՀ գործուղված Վահագն Հովակիմյանին կփոխարինի Գայանե Եղիազարյանը «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունից եւ Հայաստան-Ֆրանսիա բարեկամական խմբում դատավոր դարձած Արթուր Դավթյանին դարձյալ կփոխարինի Գայանե Եղիազարյանը: Գայանե Եղիազարյանն այն պատգամավորն է, որ 18 տարեկանից աշխատում է. համաձայն նրա կենսագրության՝ չի կրթվել երբեւէ: «Ծնվել է 1975թ. հոկտեմբերի 11-ին Երեւանում: 1993-1994թթ. աշխատել է Երեւանի հաստոցաշինական գործարանի բնական քարերի արտադրամասի որակի պատասխանատու, 1997-2000թթ.՝ «Նարեկ» լիակատար տնտեսական ընկերակցության որակի պատասխանատու, 2000-2003թթ.՝ «Նարեկ Տոպազ» ՍՊԸ որակի պատասխանատու, 2016-2018թթ.՝ «Տուր Ըղվայս» տուրիստական գործակալության տնտեսական բաժնի պատասխանատու: 2015 թվականից՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հիմնադիր անդամ է, եւ 2018-2020թթ.՝ ՔՊ վերադարձի հիմնադրամի Աջափնյակի գրասենյակի գործավար: 2020-2022թթ. ՔՊԿ Աջափնյակի տարածքային կառույցի գործավար է: 2018-2022թթ.՝ Երեւանի ավագանու անդամ է («Իմ քայլը» դաշինք), 2022-ից՝ ԱԺ պատգամավոր: Ահա սա պետք է զարգացնի խորհրդարանական կապերը Ֆրանսիայի, Ճապոնիայի եւ Սինգապուրի հետ:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԱՆՈՆՆԵՐ

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԻՄԱՆԱԼ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԺԱՄԱՆԱԿ

Ի՞նչ անել երկրաշարժի ժամանակ տանը, դրսում, մետրոյում կամ մեքենայում գտնվելիս:

Պետք է հետեւել հետեւյալ կանոններին.

Եթե երկրաշարժի ժամանակ շենքում եք

ա. Եթե բարձրահարկ շենքի 1-ին եւ 2-րդ հարկերում եք, աշխատե՛ք անհապաղ դուրս գալ շենքից, հեռացե՛ք դեպի բաց տարածություն:

բ. Եթե գտնվում եք 3-րդ եւ ավելի բարձր հարկերում, շենքից դուրս մի՛ եկեք. աստիճաններն ու սանդղակները խցանված կլինեն խուճապահար մարդկանցով, վերելակները կարող են անջատվել ցանկացած պահի: Բացի դրանից, առաջին հերթին սովորաբար փլվում են աստիճաններն ու սանդղակավանդակները:

գ. Կարելի է կանգնել շենքի միջին մասի հիմնական կրող պատերի, նրանցով կազմված անկյունների, այդ իսկ պատերում դռան բացվածքների եւ հենասյուների մոտ՝ գլխավերեւում պահելով աթոռ, պայուսակ կամ այլ համապատասխան իր վերեւից թափվող ծեփակտորներից պաշտպանվելու համար: Կարելի է նաեւ մտնել տարածքում գտնվող մահճակալի կամ սեղանի տակ:

դ. Պատուհաններից եւ շենքի արտաքին պատերից հեռո՛ւ մնացեք փշրվող առարկաներից չվնասվելու համար. դրանք փլվում են առաջին հերթին:

ե. Զգուշացե՛ք ծանր ու մեծածավալ առարկաներից՝ պահարաններից, սառնարաններից, որոնք կարող են տեղաշարժվել եւ շրջվել:

զ. Ցնցումների ավարտից հետո փորձե՛ք դուրս գալ շենքից նախապես որոշված ճանապարհով:

է. Շենքից դուրս գալիս զգուշացե՛ք ընկնող բեկորներից, կոտրատված ապակիներից, կտրված էլեկտրալարերից:

ը. Փլուզումներից առաջացած փոշուց կարող եք շնչահեղձ լինել, այդ իսկ պատճառով շնչելիս օգտագործե՛ք թաշկինակ, գլխաշոր կամ հագուստից պոկված մի կտոր:

Եթե երկրաշարժի ժամանակ գտնվում եք փողոցում



ա. Հեռացե՛ք շենքից, կամուրջներից եւ էլեկտրասյուներից դեպի անվտանգ տարածություն:

բ. Երբեք շենք չմտնեք այնտեղ գտնվողներին դուրս բերելու համար. դա շատ վտանգավոր է: Մնացե՛ք դրսում, միաժամանակ փնտրե՛ք նրանց օգնելու տարբերակներ:

Եթե երկրաշարժի ժամանակ գտնվում եք ընթացող տրանսպորտում

Երբ սկսվում է ուժեղ երկրաշարժը, դուք չեք կարող տիրապետել ղեկը: Տպավորությունն այնպես է, կարծես թողել է մեքենայի անիվը: Այդ ընթացքում որպեսզի համոզվեք, որ դուք չեք հարվածել որեւէ այլ մեքենայի, կամ էլ ձեզ չեն հարվածել, դանդաղեցրե՛ք ավտոմեքենայի ընթացքը եւ շարժվե՛ք ճանապարհի աջ կողմով: Կա՛նգ առեք համեմատաբար բաց տարածությունում՝ կամուրջներից, բարձրահարկերից եւ էլեկտրասյուներից հեռու: Մնացե՛ք մեքենայում, հետեւե՛ք մեքենայի ռադիոընդունիչով տրվող տեղեկատվությանը եւ գործե՛ք համաձայն դրա:

Բոլոր մեքենաների մուտքը դեպի աղետի գոտի խստիվ արգելվում է, բացի մասնագիտացված տեխնիկայից, փրկարարական ջոկատներից, հրշեջ խմբերից եւ շտապ օգնությունից:

Եթե մետրոյում եք

Եթե մետրոն ռմբակոծության ժամանակ ապահով ապաստարան է, ապա ուժեղ երկրաշարժի դեպքում այն նույնքան վտանգավոր է:

Այդ դեպքում՝

ա. Խուճապի մի՛ մատնվեք եւ առաջահերթ ապահովե՛ք ձեր անվտանգությունը:

բ. Ցնցման ժամանակ ամուր բռնվե՛ք որեւէ առարկայից, օրինակ՝ ուղեբեռի դարակից եւ երկաթե ձողերից այնպես, որ չընկնեք:

գ. 5-բալանոց երկրաշարժի ժամանակ հոսանքը կանջատվի, գնացքը ժամանակավորապես կկանգնի, մետրոյի կանգառում ինքնաբերաբար կմիանան վթարային լամպերը:

դ. Դեպի ելքերը գնալը վտանգավոր է եւ կարող է խուճապ առաջացնել:

Հետեւե՛ք կայարանի՝ բարձրախոսով տրվող ցուցումներին:

Եթե արթնացել եք ստորգետնյա ցնցումներից

ա. Ոչ մի դեպքում չօգտվեք էլեկտրականությունից, չօգտագործեք լուցկի կամ գազայրիչ (գազատարը կարող է վնասված լինել): Օգտվե՛ք միայն գրպանի լապտերից:

բ. Հագնվելու վրա ժամանակ մի՛ վատնեք, արագ վերցրե՛ք ամենաանհրաժեշտ իրերով պայուսակը, գործե՛ք՝ բաժնի նախորդ կետերում նշված կանոնների համաձայն:

Հիշեցնենք՝ երեկ՝ վաղ առավոտյան, Թուրքիայի հարավում՝ Քահրամանմարաշ նահանգում, 7,7 մագնիտուդ ուժգնությամբ եւս մեկ երկրաշարժ էր տեղի ունեցել, որը, ըստ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի, ամենասարսափելի աղետն է 1939 թվականից ի վեր:

Փետրվարի 6-ի դրությամբ փլուզվել է ավելի քան երկու հազար շենք, 1000-ից ավելի մարդ է մահացել, հինգ հազարից ավելին՝ վիրավորվել:

Թուրքիայում գրանցված երկրորդ ուժգին երկրաշարժը զգացվել է նաեւ ՀՀ տարածքում:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

ԱՊՕՐԻՆԻ ՎԱՃԱՌՔ՝ ՍՈՑՑԱՆՑԵՐՈՒՄ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչությունը տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի շրջանակում բացահայտել է սոցիալական ցանցերի միջոցով դեղամիջոցների եւ վիտամինների ապօրինի իրացման դեպք:

Պետական եկամուտների կոմիտեի հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչություն ստացվել էին տեղեկություններ, որ Երեւան քաղաքի բնակիչ Մ. Ս.-ն «Ամազոն» համացանցային կայքի միջոցով ձեռք է բերում դեղանման ապրանքատեսակներ, դրանք գովազդում եւ իրացնում է ֆեյսբուքյան էջի միջոցով: Հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցների ձեռնարկած միջոցառումների շրջանակում հեռախոսազանգի միջոցով տվյալ քաղաքացու հետ ձեռք են բերվել պայմանավորվածություններ՝ գովազդվող ապրանքատեսակների ձեռք բերման վերաբերյալ: Նախօրոք պայմանավորված վայրում Մ. Ս.-ն երկու դեպքով Հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցներին կանխիկ դրամով վաճառել է ընդհանուր 45.000 դրամի դեղանման՝ «Ադվիլ-իբուպրոֆեն» «Վիտամին D3», «Նեւրոբալանս, ցինկ, մագնեզիում եւ վիտամին B6» տեսակի ապրանքատեսակներ:

Իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ քաղաքացին չունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար պետական գրանցում, հաշվառված չէ հարկային մարմնում:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ գնված ապրանքատեսակներից «Ադվիլ-իբուպրոֆեն» տեսակի հաբերը հանդիսանում է դեղամիջոց: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է նաեւ, որ քաղաքացին իրականացրել է ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն, այդ թվում՝ դեղամիջոցի վաճառք: Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 407-րդ հոդվածի հատկանիշներով կազմված արձանագրությունն ուղարկվել է Կոմիտեի իրավաբանական վարչություն վարչական վարույթ իրականացնելու համար:

Հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչությունն իրականացնում է անհրաժեշտ միջոցառումներ պետությանը պատճառված վնասի չափը պարզելու համար:

Պետական եկամուտների կոմիտեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հորդորում է զերծ մնալ սոցիալական ցանցերի միջոցով կասկածելի ծագում ունեցող, առողջության համար հնարավոր վտանգ ներկայացնող դեղեր եւ վիտամիններ ձեռք բերելուց:

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԿՅԱՆՔԻՑ ՀԵՌԱՑԵԼ Է ՑԵՂԱՍՊԱՆԱԳԵՏ ՌՈՋԵՐ ՍՄԻԹԸ

Զորյան ինստիտուտի գիտական խորհուրդը, պրոֆեսորադասախոսական կազմը եւ ողջ անձնակազմը սրտի խորը կսկիծով հայտնում է, որ 2022 թվականի նոյեմբերի 28-ին Վիրջինյա նահանգի Ուլիյամսբուրգ քաղաքում 86 տարեկան հասակում կյանքից հեռացել է Զորյան ինստիտուտի գիտական խորհրդի նախագահ (2004-2022), Զորյան ինստիտուտի ցեղասպանության եւ մարդու իրավունքների համալսարանական ծրագրի երկարամյա տնօրեն, պրոֆեսոր Ռոջեր Սմիթը:

Պրոֆեսոր Սմիթի գրչին են պատկանում ցեղասպանության էությունը, լեզուն, ժխտումը բացահայտող բազմաթիվ հոդվածներ: Ռոջեր Սմիթը եղել է նաեւ Զորյան ինստիտուտի՝ «Ցեղասպանագիտություն եւ կանխարգելում» գիտական ամսագրի (որն հետագայում վերանվանվեց «Ցեղասպանագիտության միջազգային ամսագիր») ստեղծման եւ վերահսկման ակունքներում եւ երկար ժամանակ հանդիսացել դրա հիմնադիր համախմբագիր:

Որպես Ցեղասպանության եւ մարդու իրավունքների համալսարանական ծրագրի ղեկավար՝ Ռոջեր Սմիթը կարեւոր դերակատարություն է ունեցել ծրագրի զարգացման եւ հաջողության գործում: Պրոֆեսոր Սմիթի անձնվեր գործունեությունը ծրագրի կայացման հարցում ակնհայտ էր, նա տարեցտարի արդարացիորեն արժանանում էր նորահայտ գիտնականների սիրուն եւ համակրանքին, դառնում շատ շրջանավարտների եւ երիտասարդ գիտնականների խորհրդատուն եւ ընկերը ողջ աշխարհում, այդ թվում՝ նաեւ շատուշատ հայաստանցի ուսանողների:

2008 թվականին պրոֆեսոր Սմիթը ՀՀ նախագահի կողմից պարգեւատրվել է Մովսես Խորենացի մեդալով՝ «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում նշանակալի ներդրման համար»: Մովսես Խորենացու մեդալը Հայաստանի Հանրապետության բարձրագույն պարգեւն է, որը շնորհվում է մշակույթի, արվեստի, գրականության, կրթության, հասարակագիտական գիտությունների եւ սպորտի բնագավառներում ունեցած ակնառու նվաճումների համար: Պրոֆեսոր Սմիթին շնորհվել է նաեւ Սենտ-Էնդրյուս համալսարանի գրականության դոկտորի կոչում 2018 թվականին Երուսաղեմի Հոլոքոստի եւ ցեղասպանության ինստիտուտի կողմից՝ ի նշան Ցեղասպանության ուսումնասիրության եւ քաղաքական տեսության մեջ ունեցած իր ավանդի:

Ռոջեր Սմիթը եղել է ականավոր գիտնական, ցեղասպանագիտության ռահվիրա, Ցեղասպանության ժխտողականության ուսումնասիրության առաջամարտիկ, հայ ազգի մեծ բարեկամ: Պրոֆեսոր Սմիթը եղել է Վիրջինիայի Ուիլյամ եւ Մերի քոլեջի կառավարման ֆակուլտետի պատվավոր պերֆեսոր, ուր դասավանդել է քաղաքական տեսություն եւ համեմատական ցեղասպանագիտություն առարկաները: Ռոջեր Սմիթը եղել է Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության հիմնադիր անդամը, 1997-1999 թվականներին հանդիսացել է Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության նախագահը:

Ռոջեր Սմիթը մշտապես պայքարել է արդարության, ճշմարիտ խոսքի եւ մարդու իրավունքների գերակայության համար, եղել է լավ բարեկամ եւ անաչառ խորհրդատու գործընկերների եւ անսպառ ներշնչանքի աղբյուր իր ուսանողների համար: Զորյան ինստիտուտի ողջ անձնակազմը հավատում է, որ Ռոջեր Սմիթը շարունակելու է ապրել իր ընտանիքի, ընկերների, ուսանողների, իրեն ճանաչող եւ անգամ չճանաչող, բայց իր գրչին ծանոթ մարդկանց հուշերում: Գիտնական եւ ցեղասպանագետ Ռոջեր Սմիթը դեռ շատ սերունդներ է կրթելու իր հոդվածներով եւ աշխատություններով: Ռոջեր Սմիթի հիշատակի արարողությունը տեղի կունենա 2023 թվականի գարնանը: Սմիթների ընտանիքը խնդրել է բոլորին, Ռոջեր Սմիթի հիշատակին ծաղիկներ խոնարհելու փոխարեն, նախատեսված գումարը նվիրաբերել Զորյան ինստիտուտին:

ՀՐԱՊԱՐԱԿԵԼ ԵՆ

Ա. ԱՍԱՏՐՅԱՆԻ ԹՈՌԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Սեդրակ Ասատրյանի որդին՝ Արամ Ասատրյանը, ամուսնության առաջարկություն է արել սիրելիին՝ Աննային: Այս մասին տեղեկանում ենք Արտաշ եւ Տիգրան Ասատրյանների ինստագրամյան էջերից:

Եղբայրների միկրոբլոգների «Սթորի» բաժնում հրապարակված կադրերում երեւում է, թե ինչպես է Արամն անակնկալ մատուցում սիրելիին՝ Աննային: Վերջինս ընդունում է մատանին:

Հավաքվածները կիսում են սիրահարների ուրախությունը:

«Ես ասացի այո, ընդմիշտ», - մատանիով լուսանկարը մակագրել է Աննա Նիկողոսյանը:

ԼՈՒՐԵՐ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ 11-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

Երեկ դերասանուհի Անահիտ Կիրակոսյանը նշում է ամուսնության 11-րդ տարեդարձը: Դերասանուհին օրվա առթիվ հրապարակել է ամուսնու հետ ջերմ լուսանկար եւ շնորհավորել: Անահիտը նաեւ կիսվել է 11 համատեղ տարիների իրենց համատեղ ձեռքբերումներով՝ չորս երեխա, մեկ թոռնիկ: «Վատ չէ, չէ՞, ասենք շնորհավոր»,-գրել է նա:

ՑՈՒՑԱԴՐՎԵԼ ԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼՄԵՐԸ

Հայ կինոյի 100-ամյակի շրջանակներում իտալական Sudestival փառատոնին ցուցադրվում են ռեժիսորներ Միքայել Ա. Գուրջյանի «Ամերիկացի», Ինանա Սահակյանի «Ավրորայի լուսաբացը», Լիլիթ Ալթունյանի «Երբ ես տխուր եմ», Վահագն Խաչատրյանի եւ Արեն Մալաքյանի «5 երազողները եւ ձին», Սոնա Սիմոնյանի «Մեծ ակնկալիքներ», Դավիթ Բաբայանի «Կաֆկայի երազը» ֆիլմերը:

Հայաստանի կինոգործիչների միությունը տեղեկացնում է, որ փառատոնի շրջանակում փետրվարի 3-ին կայացել է նաեւ ռեժիսոր, միության նախագահ Հարություն Խաչատրյանի «Նկարչի երեք գերեզմանները» կինոնկարի պրեմիերան:

«Sudestival-ն անցկացվում է իտալական Բարի քաղաքում, որը հայտնի է իր կազմակերպված հայ համայնքով, Հայաստանի հետ բազմաթիվ ծրագրերի փոխգործակցությամբ, ինչպես նաեւ մեր ժողովրդի մեծ անհատի՝ ֆուտուրիստ բանաստեղծ, ֆուտուրիզմի տեսաբան, ժամանակին Իտալիայի կողմից Նոբելյան մրցանակի ներկայացված, իր կյանքի մի մասը Իտալիայում եւ մասնավորապես Բարիում անցկացրած եւ Բարիում իր վախճանը գտած Հրանտ Նազարյանցի հիմնադրամի եւ նրա նվիրյալ ղեկավար Կառլո Կոպպոլայի գործունեությամբ՝ ի շահ Հայաստանի եւ հայ մշակույթի տարածման: Հայ կինոյի օրերին անդրադարձել է նաեւ մեդիան»,- տեղեկացնում է Կինեմատոգրաֆիստների միությունը:

● *Փետրվարի 8-ին «Կամի» երաժշտական ակումբում տեղի կունենա «Կարինա Առուստամյան եւ The Band» փառատոնը: Տոմսերի արժեքը՝5000 դրամ: Սկիզբը՝ժամը 21:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈՋԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Նախկին ամուսինս հետապնդում է ինձ, վեճեր սարքում երեխայիս ներկայությամբ. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Էդիտա Վարդանյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ձեր ամուսնու կողմից Ձեզ հետապնդելը, Ձեզ վիրավորելը, անհանգստացնելը, սպառնալիքներ հնչեցնելը, վեճեր սարքելը կարող է համարվել ընտանեկան բռնություն Ձեր անձի հանդեպ, որի մասին էլ կարող եք ահազանգել ոստիկանության հերթապահ մաս 1-02 հեռախոսահամարով եւ հայտնել կատարվածի մասին: Դա դեռեւս չի նշանակում, որ ոստիկանները անմիջապես պետք է քրեական գործ հարուցեն կամ քրեական պատասխանատվության ենթարկեն Ձեր ամուսնուն, այլ միայն կմիջամտեն, որպեսզի դադարեցվեն նրա կողմից կատարվող նման ոչ իրավաչափ գործողությունները: Ոստիկանության աշխատակիցները, նախ, բացատրություններ կվերցնեն երկու ամուսիններից, որից հետո Ձեր ամուսնուն կվերցնեն հաշվառման, որպեսզի մեկ տարի շարունակ ամեն ամիս պրոֆիլակտիկ զրույցներ անցկացնեն նրա հետ՝ հորդորելով հետագայում զերծ մնալ նման գործողություններից, իսկ եթե իրավիճակը լինի ավելի լարված, ապա ոստիկանությունը կարող է ավելի խիստ միջոցների անցնել:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում հստակ լիազորություններ են սահմանվել ոստիկանության աշխատակիցների համար, որոնք, Ձեր ահազանգի հիման վրա, կարող են միջամտել իրավիճակի կարգավորմանը: Ընտանիքում բռնություն է համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքը, որը կատարվել է ընտանիքի անդամների միջեւ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ցանկանում եմ, որ տղաներս միասին ծառայեն միեւնույն զորամասում. ու՞մ դիմել եւ ի՞նչ անել:

Անահիտ Մելքոնյան (47 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ օրենսդրությունը հնարավորություն է ընձեռնում երկու եղբայրներին ծառայելու միեւնույն զորամասում միմյանց հետ: Այս մոտեցումը հնարավորություն է ընձեռում երկու եղբայրներին ծառայության ընթացքում լինել միմյանց կողքի, որն էլ ավելի է ամրապնդում եղբայրների կողմից պատշաճ ծառայություն տանելու հնարավորությունները, թույլ է տալիս եղբայրների ծնողներին ավելի քիչ ծախսեր կատարել իրենց երեխաներին տեսակցելու համար: Այդ նպատակով կրտսեր եղբայրը պետք է համապատասխան դիմում ներկայացնի տարածքային զինկոմիսարիատ՝ ցանկություն հայտնելով ծառայությունը կրել իր ավագ եղբոր հետ նույն զորամասում:

ՀՀ պաշտպանության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ առկա են նաեւ որոշակի սահմանափակումներ: Մասնավորապես՝ եթե ավագ որդու ծառայությունը ավելի է 17 ամսից, ապա այդ դեպքում կրտսեր եղբայրը չի կարող իր ծառայությունը կրել այն զորամասում, որտեղ ավագ եղբայրն է ծառայում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեկ եռօրյա պատերազմի հերոս Վեմիր Հարությունյանի ծննդյան օրն էր.

Վրեժ էր հոսում իմ երակներում,
Եւ ես իմ կամքով վերցրի զենքս,
Մայր հայրենիքիս բարձր լեռներում
Իմ երկրին տվի «ժամավոր» կյանքս.
Ռոպեներ թվաց, կներես, Հա՛յրս....
Շնորհավոր երկնային ծնունդդ, ՀԵՐՈ՛Ս:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **6.02.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: